ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Վազգէն Ա. Հայրապետի օրհնութեամբ, Արարատեան թեմի Երևանի առաջնորդարանում, հաստատւում է Մայր Աթոռիս «Քրիստոնէական քարոզչութեան» կեդրոնը, որ պիտի կազմակերպի ու ծաւալի Հայաստանեայց Եկեղեցու կրօնական քարոզչութեան և դաստիարակչական գործունէութիւնը Հայաստանի տարբեր շրջանների դպրոցական ու կրթական հաստատութիւններում պարբերաբար, ինչպէս նաև «Լուսոյ Խորան» կրօնական հերթական հաղորդումները Երևանի հեռուստացոյցից:

«Քրիստոնէական քարոզչութեան» սոյն կեդրոնը պիտի գործի ղեկավարութեանը ներքոյ յատուկ մի յանձնաժողովի, գլխաւորութեամբ Մայր Աթոռիս միաբան Տ. Աբել վարդապետի:

ԴԻՒԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ

Ս. Էջմիածին,
3 նոյեմբեր 1990